ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ
STATE REVENUE COMMITTEE
OF THE GOVERNMENT OF THE REPUBLIC OF ARMENIA
HEAD OF STAFF

0015 Երևան, Մ. Խորենացու 3
0015 Yerevan, M. Khorenatsi 3
Հեռ./Tel. +37410 59 43 01
Ֆաքս/Fax +37410 53 64 00

№ 18-2/10241-13 «27» 08 2013 թ.

ԻԱԿ իրավաբան
պարոն Գևորգ Հայրապետյանին

Հարգելի պարոն Հայրապետյան,

Ի պատասխան Ձեր ս.թ. օգոստոսի 22-ին ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե մուտքագրված թիվ 206-ի 3 գրության՝ հայտնում ենք Ձեզ, որ Հայաստանի Հանրապետությունում պետական գնումների գործընթացն իրականացվում է գնումների մասին օրենսդրության պահանջներին համապատասխան: Գնումների գործընթացի թափանցիկությունն ապահովելու նպատակով՝ գործող օրենսդրությունը պահանջում է հրապարակել սպառիչ տեղեկատվություն կնքված պայմանագրերի մասին:

Մասնավորապես, «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն *«Պատվիրատուն սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված հայտարարությունը սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետում հրապարակում է նաև http://www.azdarar.am Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքէջում»*:

Ելնելով վերոգրյալից՝ հայտնում ենք Ձեզ, որ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից կնքված բոլոր պայմանագրերին կարող եք ծանոթանալ համացանցի վերը նշված, ինչպես նաև www.e-gov.am կայքերի միջոցով:

Միաժամանակ հայտնում ենք, որ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն, եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկատվությունը հրապարակված է, ապա տվյալ հրապարակման միջոցի, վայրի և ժամկետի մասին տեղեկությունը դիմողին է տրվում հարցումը ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում:

Արմեն Գևորգյան

Հեռ.՝ (060) 544 414

46